

ՊԱՏԱՆԱԳՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

| | |
|-------------------|--------|
| Պուշկարին համար | 12 դր. |
| արհեստ | 7 " |
| վեցամսայ | 7 " |
| Արսասահմանի համար | 15 դր. |
| վեցամսայ | 8 " |
| Ավերի աշխատանք | 3 սլ. |
| վեցամսայ | 1.50 " |

Ծանուցման տարբերակները համար 40 սահմանի իսկ վերջին կրկին համար 20 սահմանի կ, և բնական աղի անցանկերու համար 20 0/0 զվազ կրկնայ:

Կառույցի համար ձևի 10 սահմանի կ,

ՇԱՐՋՈՒՄ

ԼՐԱՌԻՐ ԱԶԳՈՅԻՆ. ԲԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿՐ. ՀՐԱՏ՝ ԲԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇԱՔԹԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ՕՐԵՐԸ

Отговоривше: СТЕПАНЪ КАНАРИНЪ

Կառույցի կառուցման և վերջին արագորոշման ևսահման

Гедакция на вѣстникъ "Шаржумъ" Варна

Redaction du journal "Charjoum" Varna (Bulgarie)

Պուշկարին համար ձևի

15 ՍԱՆԹԻՄ

Արսասահմանի համար ձևի

20 ՍԱՆԹԻՄ

Կառույցի կառուցման ևսահման

ՇԱՐՋՈՒՄԻ ԲԱՏԱՆԱԳՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԳՐՈՒՈՂԸ ԲԱՏՆԵԳԻՆԸ ՊԵՏՎ ԵՒ ԿԱՆԿԻԿ ՎՃԱՐԵ

ՏԱՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

— — —

Փետրվարի 1ին լրացաւ «Շարժում»-ի 9րդ տարին. իսկ այսօրվան համարով սկսվում է 10րդը, նրա կրկնվող օրերում... ու քանի որ որոշ չէ թէ այդ կրկնվող ինչ էլք կունենայ՝ կարծում ենք որ անհամեստութիւն չի համարվի նրա ինը տարուան ընթացքում կատարած գերի հակիրճ նկարագրութիւնը անել:

«Շարժում»-ը հիմնեցինք այն ժանր, սգապատ օրերում, երբ արտասահմանի հայութիւնը միացած՝ թրջական գազանութիւններից ճողոպրած, սարսափների ազդեցութեան տակ խելակորոյս նոր գաղթականութեան և երկրից հեռանալու անկարգութիւն թշուառութեան կոչերի, ազգակների առջև սահմակած՝ սգում, ողբում և յեղափոխութիւն էր անիծում, այն միակ պատճառը ընդունելով բոլոր դժբախտութիւններին... Միւս կողմից յուսահատութեան դուռը հասած այդ հայ հատուածների մէջ սպրդել էին մութ, թէեւ գժբախտութիւնների իրական պատճառը թուրք ու թէթիմը լինելը գիտցող, շահամու, միայն իրենց փորի մասին մտածող տիպեր, որոնք օգտուելով յեղափոխութեան անաշոգութիւնից և մի քանի ռեսանից խոսքով ու գրչով ժողովրդին ձյնակցում և նրան աւելի զգայի յուսահատութիւն էին մղում:

«Շարժում»-ը անխնայ պայքար սկսեց լքվողների մանուսանգ լքումը փառաբանող մութ տիպերի վոհմակի դէմ. որովհետեւ մենք համոզված էինք թէ ցեղային ընդհանուր լքումը ցեղի գոյութեան յարատեւութեան համար աւելի վտանգաւոր էր, քան բոլոր թշուառութիւններն ու պատուահաները...

Պայքարի հետ միասին «Շարժում»-ը աշխատեց ժողովրդի սեւ մտածումներին տարբեր ուղղութիւն տալ վերջնական յուսահատութեան ճիւղերից փրկելու:

տութեան ճիւղերից փրկելու համար և օգտուելով Լահէի խաղաղութեան ժողովի գումարումից նրան համախմբեց հայ պատգամաւոր զրկելու այնտեղ. իսկ այդ գործը լաջողվելուց յետոյ՝ նա կրկին կարողացաւ ժողովրդին մի հաւաքական քայլ անել տալ՝ այն է պատժել բարոյապետ Օրմանեան պատրիարքին. որը, թէեւ Սուլթանից բանադատված, յանդգնել էր արտասահմանի հայութեան բողոքի նշանակութիւնը նսեմացնել իր ժողովին յղած հեռագրով. եւ այդ բարոյական պատիժը այն եղաւ որ արտասահմանի հայութիւնը քահանաներին ստիպեց, նոյն իսկ Օրմանեանի պատուիրակներին, չըլի յի Օրմանեանի անունը պատարագի ժամանակ. ժողովրդային պարզ բողոքի պալլ քայլեր էին սրանք. որոնց մանրանք կարնել համար մեր կուսակցութիւնները ահագին գումներ են վատնել:

«Շարժում»-ը եղաւ խիստ բայց անկեղծ քննադատ արտասահմանեան, այն ժամանակ բոլորովին լծացած հայութեան և ձաղկողը յեղափոխական կուսակցութիւնների թերութիւնները. այն էր որ բողոքի առաջին գոռոցը բարձրացրեց և ժողովրդին պարտաւ թէ տալ հրաւիրեց հնչակեան կեդրոններին, նրանց եղբայրասպանութիւնների պատճառով. Վերնայի հայութիւնը առանք կուսակցական խտրութեան համախմբվեց ու իր ցուկոտ պարտաւ զրկեց սփրնները կուսեցնելու համար:

«Շարժում»-ը էր որ համերաշխութեան օրինակ հանդիսացաւ իր էջերում տեղաւորելով թէ հնչակեանների և թէ դաշնակցականների ընդհանուր ոգով գրված գրութիւնները ու այդպէսով բոլոր կուսակցութիւնների, շատ անգամ ակամայ յարգանքը վայելեց:

«Շարժում»-ը էր որ, չը նայելով իր տիրոջ դաշնակցական լինելուն և յաճախ պաշտօնների մէջ գտնուելուն,

իր հրաւիրական գրեթէ առաջին օրերից սքողեալ կերպով մասնանշեց Դաշնակցութեան պակասութիւնները իսկ շորս տարիէ ի վեր բացարձակ պայքարը սկսեց դաշնակցութեան վարիչների դէմ (որոնց զօրութեանը առջեւ սմբել էր ամբողջ հայութիւնը և չեղք մամուլը) այն համոզումը ունենալով թէ՛ միայն դաշնակցականի օրգանի քննադատութիւնները կարող են ժողովրդին հաւատացնել և սթափեցնել դաշնակցական շարքերին. ու այդ այն ժամանակ, երբ, ինչպէս վկայեց «Մուրճ»-ը, ոչ ոք ծպտուն չէր հանում վախնալով եղբայրասպան գաշտից... Այդ պայքարում էլ յաջողեց «Շարժում»-ը, որովհետեւ այսօր համազգային քննադատութեան և դատափետումի արագ փոխակալումը կամ պէտք է արմատականացէ բարեփոխի և կամ թէ վերջ տայ իր սիրողական, խնամիական, բաշխողական, մթնոլորտով յղիացած ցած վիսուակար գոյութեան:

Վերջապէս «Շարժում»-ը վերջին տարում, առաջինը հրէր կարգաց Մուրաթին և Անգրանիկին՝ երկու կուսակցութիւնների ամենաաջքի ընկնող, ժողովրդական մտքոր և անձնագոհ ճանաչված անհատներին, որ համերաշխութեան գործին ձեռնարկեն: Ու գոհ ենք որ երկու պարտններն էլ իրենց կոչերով ու ճիգերով մէջ տեղ եկան համերաշխութիւնը իրականացնելու...

Այս է կատարել «Շարժում»-ը իր գոյութեան ընթացքում. դատաւճիւրը թողնում ենք գիտակից հայութեան անկեղծ մասին: Իսկ մեզ ի՞նչ է մնում մեր այս հրապարակախօսային և նախապէս երկրում ունեցած վտանգներով լի բանտեր, աքսոր հետեանք ունեցող գործունէութեան հանդէպ: — Հալածանք, զրպարտութիւններ, դաւեր, մահափորձեր, եղբայրասպան

ձեռքերից զլխիս վրա մնացած շորս սպիներ, ու շնորհիւ չը գանձված կամ ուրիշների ձեռքով գանձված և կերված բաժնեգիրներից գոյացած մի գեֆիցիտ — պարտք 18000 ֆրանկ. ննորհակալ եմ...

Ահա այս պայմաններում «Շարժում»-ը թեւակոխում է իր 10րդ տարին:

Անցեալ օրերը արդէն յայտարարեցինք թէ՛ այս պայմաններում «Շարժում»-ը կամ կը ծախվի, կամ կը տեղափոխվի մի աւելի յարմար պայմաններով վայր և կամ թէ բոլորովին կը դադարի:

Բոլորովին դադարելու պարագային մենք գոնէ խղճի հանգստութիւնը կունենանք ստելու թէ՛ «Շարժում»-ով հայ յեղափոխութեան և ժողովրդին ծառայեցինք այնչափ, որչափ կարողացանք. և զոհեցինք մեր ուժերից շատ վեր, շատ վեր...

ՎԱՐԿՕ

Հ. Յ. ԴԱՆԵԱԿՑՈՒԹԵԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ

(Ինագիրը ուղարկվելու է Հ. Յ. Դաշնակցութեան արեւմտեան Բիրոյին, ընդհանուր ժողովին հասցնելու համար):

— Մեղադրանք եւ բողոք դաշնակցական մարմինների դէմ, կարճ բացատրութիւններով միասին, առաջարկութիւններ կազմակերպութիւնը բարեփոխելու եւ իր նպատակին ձառայեցնելու համար: —

Հ. Յ. Դաշնակցութեան բաղկանեան երկրներին 1895—96 լիբերո, Պոլսոյ գործադիր վարչութեան անգամ. 1897—98 Արեւմտեան բիրոյի անդամ եւ բաղկանեան երկրներին ներկայացուցիչ, 1898—99 բաղկանեան երկրներին ներկայացուցիչ եւ կ. կոմիտէի անդամ, 1904ին բաղկ. կ. կոմիտէի անգամ եւ 9 տարի Դաշնակցութեան տարածման ախոյեան ու թերութիւնները ձաղկող «Շարժում»-ի խմբագիր Վարդոյի:

1. Մեղադրում եմ Արեւելեան Ռիւրոս, որովհետեւ նրա թուլութեան, նոյն իսկ քաղաքային թեան պատճառով կովկասի բնակչութեան բոլոր ներկայացուցիչները, առանց սեռի եւ հասակի խտրութեան, ենթարկվեցին զանազան պաշտօնեաների վարենի բնազդներին արդիւնք հարստահարութեան, անարգանքի եւ հալածանքի...

2. Մեղադրում եմ նոյն Ռիւրոս, որովհետեւ նրա աշակցութեամբ խայտառակ վերջ ունեցաւ էջմիածնի հայ կական համագումարը ու նրա ինքնապատրաստութիւնը, որը կարող էր մեծ զարկ տալ կովկասահայի կուլտուրական կեանքին, ջուրն ընկաւ, թերեւս անդառնալից կամ շատ երկար յետաձգվելու պայմանով:

3. Մեղադրում եմ նոյն Ռիւրոս, որովհետեւ նա՝ հակառակ նախորդ ընդհանուր ժողովի օրէնք դարձած որոշումին, ինչ որ մի ժողովի որոշման վրա հիմնված եւ կովկասեան ներքին խնդիրներին ընթացք տալու անհշուտ պայակով՝ Դաշնակցութիւնը ասպարէզ հանց իբրեւ սոցիալիստական կազմակերպութիւն ու պատճառ դարձաւ կովկասեան ուժերի պառակտման:

4. Մեղադրում եմ նոյն Ռիւրոս, որովհետեւ նա առանց ծածկագրի, առանց ընդունված գաղտնի միջոցներով, առանց պաշտօնական ո եւ է նշանի, առանց ուրիշ յանձնելու ո եւ է ակնարկի (իմ բաղկանեան զաշնակցական շարքերից ընդհարումով հեռանալուց ինքնաբերաբար եւ հասցեն ինձնից վերցվելուց երեք ամիս յետոյ, անձնօթ ձեռքով եւ անձնօթ ստորագրութեամբ, երբ ոչ իմ եւ ոչ ոքի մտքով կանցնէր թէ կազմակերպութիւնը կարող է ինձ գրում ըրել) բարեկամական երկու նամակով ուղղակի ինձ երկու հազար ռուբլի ղրկեց ու պատճառ գարձաւ որ վերը յիշած հիմերի եւ իմ նախապէս արած մի գիծում վրա հիմնոված՝ կարծեմ ու համոզվեմ թէ այդ դրամը իմ է՝ զըկված է պայքարիս նոյն քաղաքում գտնվող համակիրներին, ուստի եւ կարող եմ ծախսել:

5. Մեղադրում եմ նոյն Ռիւրոս, որովհետեւ այդ դրամի խնդիրը երկու ամիս վերջը երեւան գալուց յետոյ, Արեւմտեան Ռիւրոսի պահանջման պատճառով, երբ ես տուի իմ բացատրութիւններս ու խոստացայ ամեն ջանք թափել շուտով վերադարձնելու, իսկ արեւմտեան Ռիւրոս լիբր կոպտութեամբ, ինձ ստիպեց յարաբերութիւններս խզել իր հետ եւ հրապարակաւ յայտարարել թէ՛ այդ խնդրի մասին իմ առջեւ պահանջներ կարող է զնել արեւելեան Ռիւրոս, այս վերջինը շոտագործ լուծութիւն պահպանեց, չը խօսեց նոյն իսկ այն սիւղերին՝ երբ արեւմտեան Ռիւրոս «Դրօշակ»-ում իր մի ոճիւր տղով այդ գրամը իւրացնող եւ զեղծող հռչակեց...

Արեւելեան Ռիւրոսի վերը յիշած պարագաներում, այդպիսի տարօրինակ ձեւով դրամ ղրկելը, վերջը ոչ մի պահանջ չը զնելը, ոճիւր տղով զէմ լուելը ինձ եզրակացութեան յանազեցրին թէ այդ մարմինը կամ մի գաւ էր սարքել իմ զէմ անգիտակեօրէն կազմակերպական դրամը ծախսել տալու եւ վերջ ի լուր աշխարհի յայտարարելու պայքարիս ազդեցութիւնը կտարվի:

սել տալու եւ վերջ ի լուր աշխարհի ինձ զեղծարար հռչակելու որպէս զի պայքարս ստորին շարժառիթների վերադրվի. կամ պայքարս կասեցնելու համար կաշտոք էր ու նկատելով որ ես չեմ զաղարուստ պայքարելուց ուրիշներին ձեռքով մէջտեղ հանեց, կամ իր յիմարութիւնը եւ սխալը ուղեց իմ պատիւը ոտքի տալով փրկել:

Այս բացատրութիւններից յետոյ պարզ է որ այս խնդրում ոչ զեղծման եւ ոչ դրամի իւրացման խնդիր կայ: Դրամը ուղարկված է ինձ համար, երկու պարզ բարեկամական նամակներով «թերթի» խօսքը իսկ մէջտեղ զնելով, պաշտօնական ոչ մի կերպարան չը ընկնի, եկած է իմ շնորհացած եւ ընդարկած վիճակում երեք ամիս յետոյ, որի մասին ամբողջ կազմակերպութիւնը զմէջ զգանքն է ամէն խելացի յեղափոխականի համոզումով մասնաւոր երբ խնդիրը պարզվելուց յետոյ ես խոստանում եմ ամեն ձեռք թափել շուտով վերադարձնելու, առանց ո եւ է պատճառաբանութիւն զնելու թէ այդ դրամը իմ է, Ռիւրոսի սխալովը ծախսել եմ եւ չեմ կարող վերադարձնել...

Բ.

1. Մեղադրում եմ 1905ի բաղկանեան շրջանական ժողովը, որովհետեւ նա թէ իր կազմով անկանոն թէ արեւստականօրէն զրգոված իմ բաց նամակներ զանազան ընկերներին քննադատական յղածներէց, որոնք գրված էին խնդրի նիւթ զըրամական խնդիրներից առաջ եւ ի կ. կոմիտէի անդամ եղած միջոցին, զաշնակցական, (տեղական ծախքերի վերաբերեալ) մի հիմնական օրէնք խորտակելով՝ որոշեց խոշոր ուժերով մի խմբագիր հրատարակել, թերթ հիմնելու լինելու ինձ Եւրոպայի տապալելուց ցանկութեամբ եւ պայքարիս առջեւը աննելու համար, մինչդեռ ոչ ես եւ ոչ Եւրոպայի ուժեր չէինք ստանում զաշնակցութեան շահերը պաշտպանելու համար եւ ես հակառակ եմ եղել այդ ձեռի ուժերկաւոր գործիչներին եւ թերթութիւն:

Այդ միջոցին իմ կասսայում գտնվում էր եւ Լեւոնապայի պատ. մարմնին պատկանած գումարը որը եւ յիմարութիւն համարեցի յանձնել օրի նազանց ժողովի ինտրիզներով ընտրած կ. կոմիտէին որի առաջին ընկառանգն էր երկրի դրամը ծախսել ո եւ է սիրող յեղափոխական ապահովելու համար միայն իմ պայքարիս առջեւը աննելու տեսնով տողորված Ու երբ այդ կեդրոնական կոմիտէն պաշտօնապէս այդ դրամը ինձնից պահանջեց ես պատասխանեցի՝ «գրաւը պատկանում է Լեւոնապայի պատասխանատու մարմինին՝ անմիջապէս իր յանձնելու նրան, եթէ նա գոյնութիւն ունի ընդհանուր ժողովի ընտրած կողմով, հակառակ պարագային կը յանձնեմ, միայն առաջիկայ ընդհանուր ժողովին: Ուրեմն այս դրամի խնդրում էլ ոչ զեղծման եւ ոչ իւրացման խնդիր կտրող է լինել:

2. Մեղադրում եմ նոյն կ. կոմիտէին, որովհետեւ նա՝ փոխանակ իւրողութիւնը պարզելու, զաշնակցական մարմիններին պաշտօնապէս զըրպարտութիւններ տարածեց եւ ամէն ստոր միջոց գործ զրեց հասարակութեան առջեւ ինձ զեղծարար, կազմակերպութեան գրամ ուտող, իւրացնող ներկայացնել, սրպէս զի պայքարիս ազդեցութիւնը կտարվի:

3. Մեղադրում եմ նոյն կ. կոմիտէին, որովհետեւ նա ո եւ է հիմք չստանալով, մահաւն եւ այլ ուրիշ խիստ պատիժ որոշելու կամ որոշել տալու ու քաջութիւն չունենալով դատի ելլելու, ստոր, ոճրագործներին յատուկ բոլոր միջոցները գործ գրեց ժողովրդի բարկութեան զո՛ ներկայացնելու կերպարանքի տակ ինձ ոպանել տալ...

Երկու տարի առաջ այդ ոճիրը թեւազրկեց Վարնայի կոմիտէին որը ունեցաւ այդ մասին ժողով:

Սակայն այդ իմացայ եւ խնդիրը շուրջ ընկաւ: Երկրորդ փորձը տեղի ունեցաւ մի օր կէս առաջ. կ. կոմիտէի գործիքները զաշնակցութեան զէնքերը գողացող եւ սպանված Մարտիրոսի կնոջը համոզեցին թէ նրա ամուսնու սպանութեան պատճառը եւ հրամայողը ես եմ, թելադրեցին ինձ սպանել խոստանալով ազատել թէ բանտից եւ թէ պատժից: Եւ իրօք մի օր տունս զնացած միջոցին, որը նոյն կնոջ պարած փողոցում էր գտնվում, կինը պատի ետեւից մի խոշոր եւ անտաշ շինութեան քար նետեց զըլխիս, բարեբախտաբար հարւածը վրիպեց, կնոջը անմիջապէս ոստիկանութեան յանձնեցի, սակայն երբ պարզեց որ իրան սովորեցրին, դատի չը տուի եւ ոչ հրապարակ հանցի:

Նոյն կ. կոմիտէի թելադրութեամբ Սօֆիայի եեղեցում յարձակում տեղի ունեցաւ վրաս, որովհետեւ չէին յաջողել ինձ դաւաճութեամբ, իրր թէ Կրիստափորի եւ Էտուարտի գերեզմանները այցելելու նպատակով, քաղաքից դուրս տանել եւ ոճիրը կատարել:

Նոյն կ. կոմիտէի հրամանով եւ կարգադրութեամբ վերջապէս անցեալ հոկտեմբեր 14ին, Ֆիլիպպոս յանկարծակի ետեւիցս, ցորեկով, 5 հոգու յարձակումը տեղի ունեցաւ, զլիս վրա չորս վէրք ստացայ եւ հրաշքով մահից ազատվեցի: Յարձակումը այդ ձեւով եղաւ որովհետեւ ես լարված ոչ մի թակարդի չէի ընկնում, իսկ զիչքները միշտ շափազանց զգուշ էի վարվում, թէ եւ միշտ դուրս մնալով, ամեն գաղաթում իմ նշանակած մարդիքը հետեւում էին բոլոր կապիտալիսի տիպերին:

4. Վերջապէս մեղադրում եմ նոյն կ. կոմիտէին ըսնի դրամ հաւաքելու մէջ ազատ Բուլղարիայում ուր ամէն զիւրութիւն կայ մարդկանց համոզելու եւ այն էլ օտարի օղնուլութեան վրայ յենված:

Գ.

1. Մեղադրում եմ Արեւմտեան Ռիւրոս, որովհետեւ նա՝ հակառակ զըրամական խնդրի այս բոլոր մանրամասնութիւններին ձանօթ լինելուն, հակառակ իմ նախօրօք առօջարիս թէ ես պատրաստ եմ «Եւրոպայում ի լուր աշխարհի յայտարարել դրամի ինձ մօտ գտնվելը նրան չը յանձնելու մօտիւնները ու յանձնելու պայմանները պաշտօնապէս արգիլելուն, հակառակ իմ, առանց այդ արգիլքի կարեւորութիւն տալու խնդիրը Եւրոպայում միջոցաւ մէջ տեղ զնելու եւ խոստմանս գրամը յանձնել որոչ պայմաններով,

անարդարանայի ոճիրը գործեց Դրօշակի միջոցով ինձ զեղծարար եւ յեղափոխութեան դրամ իւրացնող հռչակելով: Պարզ է որ այս ամէնը իմ զէմ տեղի են ունեցած միմիայն պայքարիս պատճառով, որովհետեւ այդ պայքարը վերջապէս Դաշնակցութեան կացութիւնը փոխելու էր, կամ վերանորոգելով եւ այնտեղ սպրդած ոչ յեղափոխական շահամու, փառամու տիպերին արտաքսելով եւ խարանելով, կամ թէ Դաշնակցութիւնը ոչնչանալու էր...

Այս, մեղադրում, բողոքում եւ պատիժ պահանջում թէ ժողովրդի եւ թէ անձնապէս իմ զէմ ոճիրներ կատարողներին համար:

Մեղադրում եւ բողոքում եմ իրր հայ յազաքացի յեղափոխական, նախ կին ընկեր, խմբագիր ու կազմակերպութիւնը ամեն տեսակի ոճրագործներից, սիրողներից, ինտրիպաններից ազատելու եւ իր բուն նպատակին ծառայեցնելու համար առայարկում հետեւեալ հիմնական փոփոխութիւններ:

1. Ընդունել յեղափոխական էական ցեղը՝ անձնագրութիւն:
2. Արտասահմանի բոլոր մարմիններին, բիւրօներն էլ հետք, զրկել ձայնի իրաւունքներից զուտ յեղափոխական որոշումների վերաբերմամբ:
3. Տաճկաստանի մարմինները զատ ընդհանուր ժողով ունենուն իսկ դուրսը գտնվածները զատ:
4. Դաշնակցութիւնը իբրեւ կազմակերպութիւն երբէք չը խառնվի երկրից դուրս գտնված բնակչութիւններին ներքին կուլտուրական գործերին:
5. Անպայման համբարխութիւն միւս բոլոր հայ յեղափոխական կուսակցութիւններին հետ որոնք ներկայում եւ անցաւ զատ:
6. Հրաժարում ցոյցերից, թուացիկ խմբերից, երկրորդական թերթերի պահելուց:
7. Դրամական եկամուտի կօնտրոլը յանձնել երկրի մարմիններին ներկայացուցիչներին:
8. Երկրում անպայման կեդրոնացում, դրամը բիւրօներին գործադիր մարմիններին յատուկ ոչ մի իրաւունք:
9. Երկրի գնալու որոշում տուողներին եւ չը գնացողներին, կամ զընացող եւ առանց լուրջ պատճառի վերադարձնողներին կազմակերպութիւնից անմիջապէս հեռացնելու օրէնք:

Այս առաջարկութիւնները վերջացնելով՝ իմ եւ Դաշնակցութեան միջեւ տեղի ունեցած խնդիրներին համար առաջարկում եմ Միջոցաւ Դատարան, որը բաղկացած լինի երկու զաշնակցականներից, երկու հնչակեաններից, մի գեմօկրատից, մի սօցիալիստից եւ մի չիւզօրից՝ ուր նիստը ունենայ կովկասում: Ի հարկէ այդ դատարանի տրամադրութեան տակ պէտք է գրվեն թէ իմ եւ թէ Դաշնակցութեան մարմինների կողմից գործին վերաբերեալ բոլոր դուրս գրումները:

Միջոցաւ դատարան եմ առաջարկում, որովհետեւ այսքան զաւերից ստույգութիւններից, սպանութեան փորձերից յետոյ ես այլեւս անկարող եմ վստահել լոկ զաշնակցական դատարանի անաշտութեան վրա, մինչդեռ անզսպելի փիտազը առնեմ ան-

կողմնակալորէն կամ խարան
վելու կամ խարանելու
ինչ մեզ պարտաւորութիւն
վարձ
1907 Յունվար 18
Վանա

ԱՆՎԻՈՅ ՔԱՂԱՌԱԿԱՆ ԿԵԱՆՔԷՆ

ՉԷՄՈՐԸՐԼԷՆԻ ԱՆՎՈՒՄԷՆ ՎԵՐՁԸ

1906ը ժամանակագրական է՛ն շա-
րադէտ թուականն եղաւ Անգլիոյ
պահպանողական կուսակցութեան
պատմութեան մէջ, Տասը տարուան
ունդադրում շահախնդիր, յետագի-
մական Պաշտօն—Չէմպրլէն կայսերա-
կան ալիքածախնդիր վարչութիւնը
իր անհանդուրժելի գաղաթնակէտին
հասած էր, ազատական կուսակցու-
թեան աւելնոտ ու ջախջախիչ ընդ-
դիմադրութիւնը բարձրագոյն մէջ ու
համայնափառ բրտականգան ընդ-
հանուր ժողովուրդին մէջ կարողա-
ցած էին վերջապէս ուշի բերել յս-
տիտեանս պաղարին կարծուած ձօն
Պուրը իր խորունկ քննադատութեան
Պաշտօնը ու Չէմպրլէնի դիմակները
պատուած էին անբուժելիորէն,
նպատակաւ չէ հոս այդ նրբացած քա-
ղաքագէտներու գայթակղելի վարչու-
թիւնը վերլուծել իր խառնիճազան
երանգներով. անկարելի է Յիշուե-
լու արժանի են միայն այն երկու
կէտերը որոնք գլխաւորաբար պատ-
ճառ եղան իրենց անպատեհի պար-
տութեան ու անկախելի փլուզումին.
Հարաւային Աֆրիկէի պատերազմի
ժամանակամիջոցին սխրագործուած
անպարագիծ շահագործութեանը
ու զրամական հսկայ գումարներու
զեղծարար շուայութիւնները խոր
պզգանք ազգեցիկ հասարակութեան,
ու պատերազմին մեծածախս ապար-
դիւնութիւնը աննրբելի յուսախա-
բութեամբ համակեց մի քիչ առաջ-
ւան հայրենասիրութեան պատերազ-
մասէր տենդով խենդացած Ալպիները:
Պատերազմին կալվածակերպիչ ու հե-
րոս Չէմպրլէն գուշակեց իր մտա-
կայ բարոյական ու քաղաքական գա-
հալիքովը, ու իր անմտանալի ու-
ճիրը պարտկելու գիտաւորութեամբ
յստաջ ընթացաւ իր ճապուկ խելա-
պատակին մասնայատուկ, կայսերա-
կանորէն յղացուած առաւելութիւնով
մը, Այս անուղայ, անգլիական օ-
ղին պէս յեղեղուկ սակայն խորա-
մանկ քաղաքագէտը խորապէս հը-
մուտ իր ազգի հոգեբանութեան,
յենւած իր տիրական ու բազմակող-
մանի կարողութեանց վրայ ու
նամանաւանդ իր անզուգական ճար-
տասացութեան վրայ, ու զից անգամ
մը եւս խաբել ու իր միջնայոտ
թեանց զոհ դարձնել իր ժողովուրդը
իւնչ էր այդ նորիմակ քննած որ
Չէմպրլէն կը բաղձար իբր թէ նորի-
րել որպէս փանտալ ազգային ցուե-
րու դարմանումին ու կայսերական
հաւատարակութիւնը պահելու հա-
մար, Ըստ Չէմպրլէնի Անգլիա իր
վաճառականական զէնթէն կիջնէր
ու սեւ երեմիականներով կը բանդա-
գուշակէր անոր նահանջուժ Գեր-
մանիայի ու միւս մրցակից ազգերու:
Հետեւաբար անպատկառութիւն ու խի-
զխորէն կառաւարկէր համայնական
մաքսապաշտական քաղաքականու-
թիւնը ու արմատական բարեփո-
խումը մաքսային ներկայ ազատ փո-
խանակութեան սխալմին, որ տա-

րինբուրու գեղուն փորձառութիւնը
անժխտելի կերպով կապացուցանէ
թէ անիկա անգլիական հսկայաքալ
վաճառականութեան էն կենսարար
ազգակն եղած է, եւ Անգլիա փոր-
ձառութեան յարգը շատ լաւ գիտցող
ժողովուրդ մը ու դործնական աղջ-
մը ըլլալով աներկրայօղէն արձաւա-
րեցին այդ սինյօքը չէմպրլէնա-
կան առաջարկումները, որոնք ներ-
շնչու մներն էին իր եւ իր նման շա-
համու ջոխիբի մը որ նպատակ ըրած
էին լոկ իրենց շահագիտական ծրա-
գիրները իրականացումին համար
անպատկառ ասպատակում մը ընել
ժողովուրդական իրաւունքներուն վրայ:
Հետեւաւքը անազնազողող ազգային
պատասխանութիւն մըն էր որ տեղի
ունեցաւ: Երբեմն թուեց ճանապարհ-
տական, ժամանակ մը յորտերու ու
արքայական զերդաստանին թշնամի
տաքարին յեղափոխական մը. կը
տսթոնի ջիւրմ արմատական հետեւող
մը, ու հիմա խաւարակուտ պահպա-
նողական ու յորտերու սեղանակից
մը, ահա այս է եղած կեանքը Անգ-
լիոյ էն զօրաւոր կարծուած վարչա-
գէտ Չէմպրլէնի կեանքը, որ սա-
կայն իր ձմեռնային շրջանին մէջն է
հիմա բարոյապէս եւ թէ ֆիզիքապէս:
Մարդ մը որ համբաւն ունի ազա-
տական ու պահպանողական երկու
զօրաւոր կուսակցութեանց պատակ-
տումին պատճառն ըլլալով Երբ ար-
մատական մը, իր բաժանումով պատ-
ճառ եղաւ կլատտորնեան զօրաւոր
կուսակցութեան անկման իսկ վեր-
ջին անգամ իբր պահպանողական
պատճառ եղաւ Պաշտօնի խայտառակ
ջախջախումին ու միեւնոյն ժամանակ
իր ինկածութեան:

Արդիւնք 1906ի քաղաքական մեծ
յեղաշարժումին Բէմպրլ Պէլլըրմէն ու
իր ազատական կուսակցութիւնը
պատմականորէն սղական հսկայա-
թիւն մեծամասնութեամբ ձեռք ան-
ցուց րրիստոնական կայսրութեան
վարչական ղեկը: Մասաւորական ա-
ռողջ հիւսաթափումի յայտարար նշան
մըն էր այդ ու սովակաւարական գա-
ղափարներու յաղթանակը, նշանա-
կութեան ու լուրջ ուշադրութեան
առնելու մէկ կարեւոր երեւոյթն ե-
ղաւ զորձաւորական մեծ զանգուա-
ձին խորխտապանծ ընդվզումը ըն-
կերական յոռի պայմաններուն ղէմ,
եւ իրենց կամքը ճշգրտորէն ձայնե-
լու համար այսօր ներկայացուցիչ
անկախ կուսակցութիւն մը ունին
բարձրագոյն մէջ լոկ իրենց շահերը
պաշտպանելու ընկերվարական ծրագ-
րի վրայ ամբապնդած իր գործելա-
կերպ քաղաքականութիւնը: Տար-
ուան մը կարճ ժամանակամիջոցին
բարձրագոյն մէջ այս թուով բող-
ղատապէս փոքր բայց խիլքով ու
գաղափարով զօրաւոր խումբը պեր-
ճախուս ապացոյց եղաւ քաղաքական
ու ընկերակական հարցերը պարկեղտու-
րէն օրէնսդրելու: Մէկ խօսքով գա-
ղափարական այս փոքրաքանակ կա-
ճառը անարհամարհելիօրէն հաստա-
տեցին թէ ժողովուրդեան իրաւունք
ները գերազոյն են քան զիւանա-
գիտական գոհիկ ու մթննչ լրրա-
ժութիւնները, ոչ թէ միայն ան
իմաստ այլ անբարոյական էր ժամա-
վաճառ ըլլալ ակադեմիական ճառախօ-
սութիւններով երբ հրամայական պա-
հանջներ կային քաղաքաթիւ ընկերա-
կան ցաւերուն հոգ տանելու: Միշտ
արթուն ու ժրջան մղիչ ազգակներն
են անոնք բարձրագոյն մէջ ու եւ է

հասարակական յառաջդիմութիւնը
չօչափող խնդիրներու մէջ, ու թէ եւ
ազաւարականապէս զատուած պաշ-
տոնական ազատական կուսակցութե-
նէն, միշտ խոհեմութիւն ունեցած
են կարեւորէն պատշաճ բարոյական
աջակցութիւնը շնորհել կառավարու-
թեան պահպանողական ընդդիմա-
գիրներու շարանները ու ահասարակ
առ մկաւարական իրաւունքները
բանաբարող դաւերուն:

Ինչպէս ակնարկեցի, իբր ընկեր-
վարականներ, Անկախ Գործաւորա-
կան կուսակցութիւնը (աղբէ իրենց-
ունը) իր անկախ գիրքը կը պահէ
բարձրագոյն մէջ, սակայն ահա-
ւատներ ըլլալով ընկերվարականու-
թեան ծայրայեղ մեթոտներու, իբր
ժանրախոհ անգլիայիներ իրենց ցե-
ղին մասնայատուկ գործնական խո-
հականութեամբ կը վարուին նախա-
բարկաններու հետ, Անուրանալի
է թէ ազատականներն ալ պահպանո-
ղականներու պէս ֆինանսապէս ու
շահագիտական տեղակէտով զօրաւոր
մաս մը կը ներկայացուեն իրենց
ճիւղերուն մէջ որոնք թեքելու գիւ-
րաւ չը զիջանին մեծ սահմանադրա-
կան ու օրէնսդրական արմատական
բարեփոխումներու, սակայն մէկ
տարուան հակիք բայց գոհացուցիչ
պաշտոնավարութիւնը կուգայ վըս-
տանցնել թէ կայ նաեւ խոշոր մե-
ծամասնութիւնը իրենց շարքերու
մէջ որ կարող է առանց գաղափա-
րական զրկանքի գոհաբերութեան
միահամուռ ձայնակցիլ եւ աւելի
գործակցիլ ընկերվարական խմբակին
հետ ազգային բարեւաւութիւնը հաս-
տատելու հարկապահանջ հարցեր ի-
րականացնելու մէջ, Ռամկաւարա-
կան գաղափարներու կամաց սակայն
վստահ տարածումը բնաչրօրէն պի-
տի ստիպէ ժամանակին ազատական
ծայրայեղորէն յառաջդիմական ասար-
հերու ձուլումը ընկերվարականներու
հետ եւ բարձրագոյն մէջ միայն եր-
կու կուսակցութիւններ պիտի տի-
րապետեն: Յետագիտականներ, հո-
ղատէր, զրամատէր ու վերջապէս
կառավարելու տենջացող փոքրա-
քանակութեան մը անբաւ ու ան-
պարկեշտ ախոյանները, ու իրենց
գէմ պիտի ունենան սպառնացող,
տակտական իտէլաներով զինուած
ու եռանդուն յառաջդիմականները
ընկերվարական անժխտելի ծրագրի
վրայ կազմակերպուած: Այս է տրա-
մարանական արտածութիւնը ընկե-
րապանօղն ու անտեսագիտորէն հե-
ղինակութիւն վայելող քաղաքաթիւ
անձնաւորութեանց, ժամանակը ե-
ղելութեանց էն ճշմարտախօս մար-
գարէն է, Չարմանալին այն է որ
այս ոսկեղծ մարգարէութիւնները
կըլլուին այն երկրի մասին, ուր մի
քանի տարիներ առաջ ընկերվարա-
կանութիւնը ու իր ներկայացուցիչ-
ները արհամարհանքի ծագումնքի,
ու ամէն կծու ակնարկութիւններու
ենթակայ էին ամէն կողմէ իբր ան-
կարելի բոմաններ խանդոտ երեւա-
կայութեան, Սակայն չէ՛ մի որ երեկ-
ուան հերթիկոսութիւնները յոճախ
վաղուան ճշմարտութիւններն են:

Սաւուզ
(Շարունակելի)

ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ՅԱՂԹԱՆԱԿԸ

Վերջին օրերս ձեռքս գրքոյկ
մը անցաւ՝ «Արգարութեան յազ-
թանակը»(1) անունով, որ անա-
նուն իրր մը գրած է: Ատոր
հեղինակը, ամէն վստահութիւ-
նով գիտեմ որ անհրեւեւերու ահ
վիրայ ու նախահայր Գ. Մ...
եան կոչուածն է, երբեմնի
Ս., իշխան Բէնիկ և այլ հա-
զարումէկ անուններ կրողը, որ,
տեսնելով թէ էգնածանէն կուտ
չը կայ, և մօտ օրերս ալ հոս ու
հոն գրամուրալ է հարկաւոր,
այդ մտքի կղկղանքը շարագրած
եկու Լօնտօն, որով համակրանք
չահելով մը քանի հարուստներու
որ թուածանի «պոճոսնախ» են,
յաջողեցաւ 20—25 ոսկի կծկել
անղույս և Մանչեսթրի հայերէն
ի վարձատրութիւն ներկայ ծա-
ուայութեան թումանանի: Ներս-
կայ բրօշուրը հրատարակած է
ինք պատուելի թումանանի իր
տպարանը, սակայն խաբելու հա-
մար Բարիզէն կը ցրուի: Չար-
մանալին հոն է որ «Նարժոմը
կը ներկայացուի թումանանին
կատարեալ պաշտպան մը: Չեզ
այժմէն կըզգուշացնեմ այդ անե-
րեսներու խաղին զոհ չերթալ՝
«Նարժոմ» սիւնակները իրենց
տրամագրութեան յանձնելով՝
բաց ու քոց հնարագիտութիւն-
ներով: Ատիկա ափ մը ոսկոր
փնտաղներու խաղերն են, և
Ալեանաքի և համանման տիրա-
ցու ցաւագարներու, ինչպէս
Ղումբուեան կոչուած մայրա-
ժին. . . թող զանազան շո-
յանքներ կարգալով «Նարժոմ»
չը հրապուրեն ձեզ: Կը յուսամ,
մէկ կողմ նետելով ձեր անհատա-
կան հակառակութիւններն ու
գաղափարի տարբերութիւնները
Չօպանեանի և համանման ան-
ձանց հետ այլ խնդրոյ, այս պա-
րագային կը բռնէք ճիշդ և ար-
գարացի գիրքը: Աւով չը կար-
ծէք որ էգնածան մը պաշտպա-
նել կը ջանամ, այլ և կուզեմ
որ Մեծ. . . անորակելի
տիպին և իր խմբակին գործիքը
չը գարձնել «Նարժոմ» Յոյս
ունիմ գրել այս մտօնի շուտով:
Մ. Յոլակ
Լօնտօն
9 փետրվար 1907

Մ. Ս. — «Նարժոմ» խմբագրա-
պետը վեց ամիս շարունակ Բա-
րիզ ապրելով այդ տիպերու ինչ
ըլլալը շատ աղէկ հասկցած է:
«Չօբանեան» հակառակ ըլլալով
հանդերձ, միշտ ընդունած է որ
ան անհամեմատօրէն բարձր է
ձեր յիշած կարգի տիպերէն
և աւելի օգտակար ու աշխատող:
«Նարժոմ» շարունակ կը զրկ
վի ձեզ, Չեր նամակի պատաս-
խանը շուտով կընդունիք:

Բագուայ հայոց կուլտուրական միութեան կանոնադրութիւնը

(Հար. Առիւտ քիւնիկ եւ վերջ)

Միութեան Հասցեատեղաւորութիւնը

25. Անճնայն տարի ոչ ոչ քան Մարտի 12 Միութեան գլխաւոր խորհուրդը կազմում է միութեան գործունէութեան անցած տարուայ հաշիւը եւ յանձնում վերատուգող յանձնաժողովի քննութեանը, վերջինս երկու շաբթուայ ընթացքում համեմատելով միութեան գրքերի եւ վաւերացրած քիւնիկի հետ անում է իր նկատողութիւնները եւ վերագործնում գլխաւոր խորհրդին, որը տպելով հաշիւը բաժանում է միութեան անդամներին, Այդ նախահաշիւը քննում եւ հաստատում է միութեան մատակայ ընդհանուր ժողովում:

Միութեան կայքը եւ միջոցները

26. Միութիւնը ներկայանում է որպէս մի իրաւաբանական մարմին եւ հետեւաբար իրագոր է գնել եւ ծախել շարժական եւ անշարժ կողուածքներ, վարել եւ մասնակցել առեւտրական ձեռնարկութեանց:

27. Միութեան միջոցները կազմում են՝

ա. Անդամավճարները: (տ. 5)

բ. Նուիրատուութիւնները:

Նկատ. 1. Նուիրատուութիւնները կարող են լինել կամ միութեան անունով կամ յատկացրած որոշ խմբակների կարիքներին, համաձայն 20 ա. պարբերութեան:

գ. Երեկոյնների, նուագահանդէսների, ներկայացումների, զբօսանքների եւ վիճակախաղերի արդիւնքներից:

դ. Միութեան առեւտրական ձեռնարկութիւնների եկամուտից:

28. Միութեան հիմնական գրամատուցը (ֆօնդ) կազմում է ամէն մի նոր անդամի միանուագ ետմանայ անդամավճարից: Բացի այդ նորիկ անդամը զրուած օրից պարտաւոր է մտցնել իր սովորական անդամավճարը:

29. Գլխաւոր Խորհուրդը, համեմատ իր եկամուտների աւելացման ժաւակում է ընդհանուր միութեան բանկի կանոնադրութիւնը (ստատուտ) որի բացման ժամանակը որոշում է միութեան ընդհանուր ժողովը: Այդ բանկում կը պահուեն միութեան բոլոր գրամատուցութիւնները:

30. Անդամներից նոքա, որոնք շարունակ երեք ամսուայ ընթացքում չեն մտցնել իրանց վճարը զրկուում են անդամակցութիւնից:

Միութեան կանոնադրութեան փոփոխումը

31. Միութեան կանոնադրութեան այս կամ այն կէտի փոփոխումը կարող է կատարուել միմիայն միութեան ընդհանուր ժողովում ձայներով մեծամասնութեան որոշմամբ:

Կանոնադրութեան փոփոխութեան ենթարկելու առաջարկը ընդհանուր ժողովին անում է միութեան գլխաւոր խորհուրդը կամ ըստ իր բարեհայեցողութեան կամ միութեան ոչ պակաս քան յիսուն անդամների առաջարկութեամբ, փոփոխում յոգւածը ոչ է ստանում միմիայն այն ժամանակ, երբ որ նա կը հաստատուի իշխանութիւնից:

Միութեան վերջնական լուծումը (Լիկւիդացիա)

32. Միութիւնը փակում է ընդհանուր ժողովի երեք չորրորդ մասի պահանջմամբ, իսկ նրա շարժական եւ անշարժ կայքը եւ գրամատուցութեան յատկացնում են այն հիմնարկութեան, որը ցոյց կըտայ նոյն ընդհանուր ժողովը եւ որը կը ճանաչուի իշխանութիւնից օրինական:

Գործադիր ժողովս շնորհակալութեամբ ստացած է յուլի 8էն մինչեւ 21, թուական իւր հրաժարականին, հետեւելով նուիրատուութիւնները

Տիրաւորալիկ Տամատեանէ 10 ֆր. Ասատուր Փափազեանէ 5 ֆր. Կրազս նուագախմբին ձեռամբ Օնիկ Բարսեղեանի 48 ֆր., Կէորթ Խանճեանէ եւ Սահակ Աւետիսեանէ ձեռամբ շրջագայած գանձանակէ 67 ֆր. 75 սանթիմ

Գումար 180 ֆր. 75 սանթիմ

Նոյնպէս շնորհակալութեամբ ստացած ենք նուէր տիրաւորալիկ Արապեանէ 21 կտոր պար լիէտաղքատ աշակերտուհիներուն բաշխելու համար:

Այս առթիւ Գործ. ժողովս պարտք կը համարէ յանուն աղքատաց իւր խորին շնորհակալութիւնները յայտնել քաղաքիս յարգոյ հայ հասարակութեան որոյ ընձեռած աջակցութեան շնորհիւ, կրցաւ իւր պաշտօնավարութեան միջոցին կարելի եղածին շտափ նպաստել բազմաթիւ աղքատ եւ հիւանդ ընտանիքներուն:

Գործադիր ժողովս իւր յովորդին պատրաստ ի յանձնել իբր պահեստի իւր քովը ունեցած 613 ֆրանք 70 կէս սանդիմ գումարը:

Ի զիմաց հրաժարեալ Գործ. ժողովոյ աղքատախնամի

Առաջագլխի Ասենուպետ Օնն. Ազատեան Գ. Սիմոնեան

Վառնա, յուն. 27 1907

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ընդդիմադիր կուսակցութիւններէն կազմուած պլոքը կրպատաւաստուի բոլոր քաղաքներու մէջ հակակառավարական միջոցներ սարքել:

—Կառավարութեան կուսակիցներն ալ իրենց կողմէն կը պատրաստուին միջոցներ սարքելու:

—Սօֆիայի թերթերը կը հաշորդեն թէ՛ երկաթուղային վարչութեան եւ գործախօսներուն մէջ համաձայնութիւն կայացեր է:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ս

Պոլսէն «Մօրեթիկ քօստ» թերթին կը հեռագրեն թէ՛ Սուլթանը համաձայնեց է որ իր սիրելի ծէյմի վաշան Պրուսա արտուրի, թէ՛ եւ հաւատացած ըլլալով թէ՛ զերման գեապանտան մեղադրանքները անհիմն են:

ՌՈՒՍԻԱ

Ուիթլի բնակարանի վառարանի խողով կէն մէջ գտնուած է գոթային մեքենայ մը, գրուած է բնակարանը օգը հանելու նըպատակով:

—Բէնզայի նահանգապետը ըս պոննուած է. տեբօրիտները չեն ձերբակալուած:

—Հակառակ Ալէքսանդրիոյ բնակչութեան ցոյցերուն եւ պահանջներուն եզրկտական կառավարութիւնը քաբիթիւլասիօններու հիման վրայ պարտաւորեւր է ձերբակալուած երեք ուս հպատակները, որոնք կը մեղադրուին աուս շոգենաւը օգը հանելու յանցանքի մէջ, յանձնել աուս կառավարութեան:

Կ Ո Վ Կ Ա Ս

Թիֆլիսի մէջ դաշնակցականները Տումայի ընտրութեանց կը մասնակցին իբրեւ ընկերվարականներ. սակայն պարտուած են:

Կովկասեան մամուլը գաշնակցականները կը մեղադրէ կեղծիքներու եւ նոյն իսկ սատիկանութեան աշակցութեան դիմելու ու սպանութիւններ գործ գընելու մէջ իրենց ընտրութիւնները յաշոյղներուր համար:

ՊԱՐՍՎԱՍՏԱՆ

Բէհրանէն կը հեռագրեն թէ ազգային ժողովի ճնշմամբ կառավարութիւնը պաշտօններէն արձակել է մաքրային նախարար Նաուս, ուրիշ բալձր պաշտօնեայ մը եւ պեճիդացի երկու պաշտօնեաներ:

Ճանքոն եւ Ամերիկա

Ամերիկեան եւ եւրոպական մամուլը կը հաղորդէ որ թէ ճարտի եւ թէ ամերիկայի ամենաազդեցիկ պետական լմարդիկ համոզուած են թէ երկու պետութեանց միջեւ անկարելի է որ պատերազմ տեղի ունենայ Ռան. Փրանչեսկոյի դպրոցական խընդիրներուն առթիւ:

Այդ խնդիրը պիտի լոծուի ի նպաստ ճարտիցիներու:

ԿԱՐԵՒՈՐ

Ռուսուկի, Պուրկազի, Եոմալուի եւ Սիլվեյի բաժանորդներուն —Բայեհ հասցեյէք ձեր «Եւրոպ. ժողով» ունեցած պարտքերնիդ զրկել, եթէ չէք ուզեր որ անուրից հրատարակուի իբրեւ կապանդէք:

«ՏԱՍ» ՏԱՐԻ Ը. Ե.

ԳԼՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԷՉ

Արդէն այս անունով բըրօշիւրը յանձնված է տպագրութեան:

Բրօշիւրի նպատակն է, առանց խճճանքի Գաշնակցութիւնը մէջ տեղ դնել իր իսկութեամբը եւ միեւնոյն ժամանակ փաստել թէ՛ իմ պայքարը սկսված է շատ հին ժամանակից եւ վերջերս մրայն սուր կերպարանք ընդունեց: Բնական է որ բրօշիւրի մէջ փաստող դօկիւմենտները մեծ տեղ պիտի գրաւեն:

Բրօշիւրի գինը տպագրութիւնից վերջ 3 ֆրանկ է լինելու, իսկ բաժանորդ գրվողի համար 2.50 ֆր:

Դիմել «Եւրոպ. ժողով» Խմբագրութեան

ՀՍԵ ԴԵՂԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Ս Գանարեան եւ Ընկ, Սօլանոքա փողոց (Պալլաք բազար) Թիւ 524 Ա. ուչաթքին ճիշտ տակը

Նոր բացուած սոյն գեղավաճառատանս մէջ կը գտնուին մաքուր եւ առաջնակարգ դեղերու մեծաքանակ մթերքէ վատ թարմ հանքային ջուրեր, եւրոպական ամէն տեսակ էսքէսիալիսթէներ, բժշկական անոններ, քառուղի պարանց վերաբերեալ բոլոր առարկաներ, իրիկաթէօրներ, պիպերօններ, շերմաչափներ եւն:

Ասոնցմէ զատ կը գտնուի նաեւ սուսակարչութեան, ոսկերչութեան եւ առհասարակ արհեստի վերաբերեալ քիմիական մաքուր բաղադրութիւններ:

Թարմ եւ անարտա

Ն օ ր վ է կ ի ա յ ի ձ կ ա ն ի ւ ը

Յարգ դեղերու սղութեանէն դժգոհուութիւն յայտնողները կը բաւէ որ ուրիշ տեղէ մը գնուած ընկէ առաջ անգամ մը զրկեն նոր դեղավաճառատանս, ուր սպանվարար պիտի գտնեն գներու ամենութեան հետ դեղերու բնութիւնը:

Երկակայ քաղաքներու եւ գիւղերու մէջ գեղերու կրկնավաճառումով զբաղող խանութիւններու համար մասնաւոր գեղ:

Յանձնարարութիւնը փութով եւ ճշգրութեամբ կը գործադրուին:

ՅԱՅԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Բացուած է բոժանորդագրութիւն Ա. Դիւմայի

«ՅԱՄԻԼԻ ԱՌՈՒՄԸ»

Հոչակաւոր պատմական գործիքի քրտնախան մեծ յեղափոխութեան ժամանակից:

Թարգմանութիւն

Մ. Պաղտասարեանի Թարգմ (Պարսկաստան)

Печатница „Взаимность“ Варна







